լիանոս փութանակի ժողովեց զամենայն երկիր իւր, և մեծ և բազում զօրս կացոյց ընդ ձեռամբ իւրով. և ինքն եկ և էջ ի Խողինն. և անդ եկաց երկու երեք օր: Խորհուրդն պեղծին այդ էր, որ թէ հզօր ձեռամբ գայր այդ ոմն Տեառոթ իւր վերայ, նա ինքն անցնէր այս կողմն և փախստական երթայր առ Թագաւորն մեր Զիկմունդ. բայց ոչ ունէր բազում ինչ զօրս. և զոր ինչ ունէր՝ և զայն ևւս ահացուցին մեր իշխանք Վոյվոտայ Եալլովեցքին, որ երկեաւ և փախստական գնաց առ կայսրն Ֆերնանտ: Եւ այս անօրէնն դարձաւ, և մեծաւ ուրախութեամբ գնաց և նստաւ իւր ժանդ պարոնութիւնն. և զի ոչ էր տուեալ ի վերուստ՝ ոչ ինչ կարաց առնել. և վասն որոյ գրեալ իսկ է, եթէ, Ո՛չ կարէ մարդ առնել (առնուլ) յանձնէ և ոչ ինչ, եթէ ոչ իցէ տուեալ նմա ի վերուստ:

Խորհուրդ արին իւրեանց միջին,
Զարիք բազում սերմանեցին.
Շատոց ոխ կայր իւրեանց սրտին
Սուրբ հաւատոց Լուսաւորչին:
Ի լուսանալ օր կիրակի
Ըշտեֆան Պարոն ձիաւորի,
Գայ մըտանէ յեկեղեցի
Աստուածածնի Հայոց ազգի.
Եկաւ ոտիք ի խորանին,
Զխորհուրդն առաւ ի յիւր ձեռին,
Ցանկարծակի զարկ ի գետին
Եւ չար ոտիք կոխան արին.
Ըզսուրբ մեռոնն Էջմիածնին՝
Զայն ալ վաթեց վերայ գետնին.
Շունք և մարդիկ կոխան արին,
Եւ ալիք մեր խարշատէին.
Զինչ որ գիրք կայր յեկեղեցին
Եւ զմեծ պատկերքըն խորանին,
Խաչեր և սկի մաղըզմանին
Ոսկէջըրած և մեծագին,
Ժողովեցին ի միասին,
Տարին գըրին ի Վէստեւին 1.
Ըզվարդապետն և զաքեղնին՝
Զեռըն կապած բանդ արգելլին:
Սէչով քաղքին Հայոց ազգին
Զեկեղեցիքըն փակեցին.
Զգրունքն ամենըն մօհրեցին
Որ չիհանեն սուրբ անօթնին:
Ի լուսանալ միւս օրին
Եկաւ Պարոնն ի Վէստեւին,
Ասմաշ 2 ղըրկեց Հայոց ազգին
Բանալ եասուր զեկեղեցին.

Զինչ անօթ կայր իւրեանց միջին,
Խաչեր, շապիկք և շուրջառնին,
Ոսկէջըրած և մեծագին
Բաժկամաններն և բուրվառնին,
Արծաթապատ աւետարան,
Շարակնոցներ և սաղմոսարան,
Յայսմաւուրք և Տօրէգիրք
Գանձատետր, Մաշտոց, և այլ գըրեան,
Զինչ անօթ կայր եկեղեցին՝
Զամենեսեան ժողովեցին.
ԶԱստուծոյ տունըն կողոպտեցին
Տարան գըրին ի Վէստեւին.
Վարդապետին և աքեղային
Շատ չարչարանք նոցա տուին.
Ազէկ մարդիկ ի մէջ մըտան
Հազար ճորով ազատեցին:
Զոր հրաման արար կըկին
Բերել եասուր զթօփեր բերդին,
Սէչով քաղքին զեկեղեցին
Մեծ մեծ թօփով աւերեցին:
Վասըն մեղաց մեր անքընին
Փորձանք եկաւ Հայոց ազգին,
Աշխարհականք ու երեցանին
Ամենքեան փախուստ առին.
Շատ որ փախան մօրին մըտան,
Ոմանք բաղերըն 3 պահուեցան.
Մերկ և բոպիկ ի շուրջ եկան
Եւ լալագին մոլորական.
Հարք ի յորդւոց բաժանեցան,
Որ այս չարիս հանդիպեցան.
Բուն սիրելիքըն քակտեցան.
Վա՜յ և եղուկ միաբերան:

1. Պաշարան, Համդերձատուն:
2. Զօրական, Զաւուլ:
3. Թուխ գետնատուն: Ուրիշ Օ. բալէր: